Դ. Դեմիրճյանի ծննդյան 135-ամյակին



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԸՍՏ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա. Գ.

Հայ պատմագրությունը, հատկապես V դ. հայ պատմիչները մըշտապես հետաքրքրել են Դերենիկ Դեմիրճյանին, նրանց միջոցով մեծ գրողը փորձել է թափանցել իր ազգի պատմության խորքերը և գտնել հայապահպանության կարևորագույն հիմքերը: Հինգերորդ դարի հայ պատմիչներից հատկապես երկուսը՝ Եղիշեն ու Ղազար Փարպեցին, ներշնչել են կյանքի կոչելու գրողի գլուխգործոցը՝ «Վարդանանքը»:

Դ. Դեմիրճյանը Վարդանանց պատերազմի մեջ տեսել է աստվածային խորհուրդ. Ավարայրի ապստամբությունը հայերի համար մշտական հիշեցում է՝ օտարի առաջ չխոնարհվելու և ազգային ինքնուրույնությունը մշտապես պահպանելու:

«Վասակ» դրամայի առիթով Դեմիրճյանը քննել էր պատմական աղբյուրները, ծանոթացել Վասակ Սյունեցուն տրված՝ հետագայի պատմաբանների գնահատականներին: Ն. Ադոնցը, օրինակ, համաձայն չէ Եղիշեի և Ղազար Փարպեցու՝ Վասակ Սյունեցուն տված գնահատականներին. «Մեսրոպի կենսագիրը՝ Կորյունը, խիստ հա-

մակրանքով է խոսում Վասակի անձնավորության մասին[1]: Կասկած է առաջանում պատմիչների դատողությունների ճշմարտացիության մասին, ուստի հարկ է առավել բանական հիմքեր փնտրել Վասակի գործողություններում»[2]:

Երկար տարիների պրպտումները Դ. Դեմիրճյանին հանգեցրին այն եզրակացությանը, ըստ որի, Եղիշեի պատկերած Վարդանանց պատերազմը դարակազմիկ էր հայ ժողովրդի պատմական ճակատագրում, և Եղիշեն իր մատյանով նախապատրաստել է հետագա դարերի՝ հայ ժողովրդի մաքառումները հանուն անկախության: Ըստ Եղիշեի, միայն ազգային միաբանությամբ և գործի նկատմամբ սրբազան նվիրումով կարելի է հաղթել թշնամուն: Պատմիչը դավաճանությունը որակեց որպես մարդու մեծագույն մեղք, որն աններելի պիտի լինի նաև դարերի հեռավորությունից: Նա չի թաքցնում իր մեծագույն ատելությունը դեպի ազգային դավաճանությունը, ավելին, խոստովանում է, թե Վասակի մասին մանրամասն գրել է, որ նրա գործերին հետագայում ոչ ոք չհետևի, առավել ևս՝ նզովք կարդա նրա անվանը. «Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին, ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ…: Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն, որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արիցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»[3]:

Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքի» պատմական հիմքը առաջին հերթին Եղիշեի երկն է, այդ պատմավեպի ոգին Եղիշեն է: Եղիշեն շատ ճշգրիտ ու հիմնավոր բացատրում է սրբազան ուխտի անխախտ էությունը: Ավարայրի հերոսամարտի բոլոր դրվագները հայ նախարարների ու հոգևոր հայրերի՝ գերեվարության ժամանակ դրսևորած հերոսական վարքագիծը, հայ հասարակ ժողովրդի տարերային հերոսությունը պայմանավորված էին սրբազան ուխտի կարևորագույն որոշմամբ: Եղիշեն ներկայացնում է սրբազան ուխտի վճիռը. «Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Զեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն: Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ: Օրէնք աստուածայինք կայցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»[4]:

---

[1] Կորյունը գրում է. «Այն ժամանակ Աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզության գործին: Նա ինչպես որդին հորը՝ հնազանդություն ցույց տալով և Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչև վերջը գործադրում էր նրա հրամայածները (**Կորյուն,** *Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը՝ ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Ե., 1962, էջ 109):*

[2] **Ադոնց Ն.,** *Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 181:*

[3] **Եղիշե**, *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 282:*

[4] *Նույն տեղում, էջ 114:*

Սրբազան ուխտի որոշումն անցել է Հայսմավուրքների մեջ: Առաջին տպագիր Հայսմավուրքում, որտեղ առկա են երկու վկայաբանական սեղմ հատվածներ՝ նվիրված Ղևոնդյաններին ու Վարդանանց, ասվում է, թե սուրբ Հովսեփը ժողովում է աշխարհի բոլոր եպիսկոպոսներին, երեցներին և մնացյալ իշխաններին, նրանց հետ ուխտ է կապում՝ հաստատուն մնալ Քրիստոսի հավատին և հոժարակամ մեռնել հանուն նրա անվան և նահատակի անուն ժառանգել, կռվել պարսից զորքի դեմ և անխնա սպանել ուրացողներին: Թո՛ղ չխնայի հայրը որդուն կամ եղբայրը՝ եղբորը, և ազգականը՝ ազգականին: Եվ բոլորը՝ այր և կին, բորբոքվում են նույն նախանձախնդրությամբ[5]: Հայսմավուրքը փոքր-ինչ փոխել է Եղիշեի սրբազան ուխտի որոշման **կետերը****: Դերենիկ Դեմիրճյանը «Վարդանանքում» անշեղ հետևել է Եղիշեի հաղորդածին և իր վեպում պատկերում է, թե ինչպես դավաճան Վասակի դեմ ելան կինը, զավակները, ծառաները: «Վարդանանք» վեպի ոգին վերցնելով Եղիշեի երկից՝ Դեմիրճյանը չի անտեսել Ղազար Փարպեցու պատմության մեջ եղած որոշ փաստեր, որոնք Եղիշեն, անշուշտ, գիտեր, սակայն չէր ներառել իր պատմության մեջ՝ Վասակի դատավճիռը առավել անխնա դարձնելու համար: Երբ Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունեցին և մյուս նախարարները կեղծ ուրացությամբ փրկում են իրենց կյանքը՝ Հայաստան վերադառնալու համար, պարսից Հազկերտ արքան որպես պատանդ է պահում վրաց Աշուշա բդեշխին և Վասակի երկու որդիներին՝ Բաբիկին ու Արտներսեհին. «Բայց զբդեշխն Վրաց զԱշուշայ և զերկու որդիս իշխանին Սիւնեաց Վասակայ՝ զԲաբիկ և զԱրտներսեհ, ոչ արձակեաց թագաւորն պարսից Յազկերտ ընդ այլ նախարարացն Հայոց. հայելով ի յառաջիկայ իրացն անյայտութիւն՝ կասկածեալ զգուշացաւ»[6]:*

Ղազար Փարպեցին Վարդանանց պատերազմը կոչում է կրոնական, մինչդեռ Եղիշեն, պահպանելով կրոնական որակումը, չափազանց ճշգրտորեն՝ կետ առ կետ բացատրում է, թե նախքան դավանափոխության պահանջը Հազկերտը որքան հեռատեսորեն թուլացնում էր Հայաստանը՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումով: Այս բոլոր փաստերը Դեմիրճյանը ներառել է «Վարդանանքում»:

Եղիշեն շատ մեծ տեղ է տվել ժողովրդի դերին: Այս հանգամանքը ևս Դեմիրճյանի մոտ սևեռամիտ էր:

Ղազար Փարպեցին մեզ է ավանդել Արարատյան դաշտի բնության՝ ֆլորայի, ֆաունայի մի հրաշալի նկարագիր, Արարատյան դաշտավայրը հայերի համար դիտարկելով որպես աստվածային գավառ՝ լի բարիքներով,

---

[5] *Հայսմաւուր, Կոստանդնուպոլիս, 1706, էջ ՌՃՂԱ (991):*

* *Եղիշեի մոտ սրբազան ուխտի որոշումը հետևյալն էր. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն: Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ»* (Եղիշե, *նշվ. աշխ., էջ 114):*

[6] Ղազար Փարպեցի, *Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ.Մալխասյանցի, Ե., 1982, էջ 128:*

առատաբաշխ ու բերկրալի երկրային դրախտ: Նա ի պատիվ հայ նախնիների՝ ջերմ հարաբերություններ է տեսել նախարարների ու շինականների միջև, կարծես հասարակության այդ երկու խավերը մրցում էին իրենց պարտականությունների կատարման մեջ. «Որոց դէտ ակն կալեալ հանապազօրեայ սովորութեան՝ ջրայոյզ ջրածուփ ձկնորսացն մանկունք, ընթացեալք ի յառաջս նախարարագունդ որերոյն՝ ձկունս ի յորսոյ և բազմազան վայրենի հաւուց ձագսն կամ ձուս ի կղզեաց գետոյն բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: Յորոց ընկալեալ մասն ինչ նախարարացն ըստ առաւելապէս բաւականի ընծայաւորացն, և հասեալք լի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր յապարանս՝ շնորհեն և ան-պարապիցն մնացելոցն ի տան՝ զամբիծսն, առաւելապէս և առ օտարսն»[7]: Վարդան Մամիկոնյանի և ընդհանրապես Վարդանանց խմբի ազնվականների ու շինականների հարաբերությունները նման են Ղազար Փարպեցու պատկերածին:

Դեմիրճյանը պատմության մեջ գնահատում է և՛ հզոր անհատին, և՛ ժողովրդի վիթխարի ուժը: Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին նա «Գրական թերթում» հետևյալ խրախույսն է հղում իր հայրենակիցներին. «Հայրենական պատերազմը ժողովրդի պատերազմն է: Դա այն պատերազմն է, երբ ժողովուրդը ինքն է կամենում մղել առանց թելադրության և քարոզի: Դա այն պատերազմն է, երբ «դանակը հասնում է ոսկորին», և ժողովուրդը օրհասական կռվի է ելնում փրկելու իր սրբազան հողը, երկիրը, ազատությունը»[8]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Դեմիրճյանը գրեց ոչ միայն «Վարդանանքը», այլև գիտական մի հետազոտություն, որի մեջ երևում են, թե, Եղիշեից ու Ղ. Փարպեցուց զատ, ինչ աղբյուրներ է օգտագործել նա: Նա օգտվել է Ա. Գարագաշյանի, Հ. Մանանդյանի և Հր. Աճառյանի, Ն. Մառի, Բ. Կյուլեսերյանի, Ն. Ակինյանի, Կարլ Կլաուզնիցի, ժամանակի պահանջով՝ նաև Ֆ. Էնգելսի, Վ. Լենինի աշխատություններից: Իր հոդվածն անվանել է «Վարդանանց պատերազմը»: Այն տպագրվել է «Սովետահայ գրականություն» ամսագրի 1943 թ. մարտ-մայիս ամիսներին (N 3, N 4-5): Հոդվածի ամսագրային տարբերակի երկրորդ մասն ունի ենթախորագիր՝ «Վարդանանց պատերազմը և նրանց մղած ճակատամարտերը»[9]: Այս հետազոտության մեջ Դեմիրճյանը մանրամասն նկարագրում է Ավարայրի հերոսամարտը՝ նրան նախորդող դեպքերով ու ճակատամարտերով, նաև անդրադարձ ունի Ավարայրին հաջորդող իրադարձություններին: Նա բացատրում է, թե Ավարայրը Վարդանանց հերոսացման բարձրակետն էր, սակայն մինչ այդ Վարդանը պարսիկների դեմ այլ ճակատամարտեր էր

---

[7] *Նույն տեղում, էջ 24:*

[8] **Արզումանյան Ս.,** *Սովետահայ վեպը, Ե., 1980, էջ 3, տե՛ս նաև Գրական թերթ, 1941, N 19:*

[9] *Այդ ենթախորագիրը պահպանված է Դ. Դեմիրճյանի Երկերի ժողովածուի XII հատորում (Ե., 1985, էջ 331):*

վարել, և մեծ զորավարի նահատակվելուց հետո էլ երկար ամիսներ կռիվը շարունակվում էր: Այդ ճակատամարտերի մեջ չեն մտնում քուշանների դեմ մղվածները:

Դեմիրճյանի հոդվածի առաջին մասը նվիրված է Վարդան Մամիկոնյանի անձին՝ ծագմանը, կրթությանը, հայ ժողովրդի պատմության մեջ ունեցած դերին. «Վարդան Մամիկոնյան զորավարը, մեր մեծ հայրենասերը և ստրատեգը՝ Մամիկոնյան նախարարության ամենանշանավոր դեմքն է: Նա հանդես եկավ հայ ժողովրդի կյանքի հույժ տագնապալի մի շրջանում, երբ պարսից Հազկերտ Բ թագավորը սպառնում էր ոչնչացնել հայ ժողովուրդը իբրև ազգություն»[10]: Գրողը հրաշալի պատկերացնում է V դ. երկրորդ կեսի քաղաքակիրթ աշխարհի, հատկապես Պարսկաստանի ու Հունաստանի քարտեզը, Հայաստանն իրար մեջ բաժանած երկու տերություններին, և այդ տերություններին սպառնացող արտաքին ուժերին՝ հոներին, քուշաններին: Նա նույնիսկ արդիական տեղանուններով ընթերցողին ներկայացնում է, թե հատկապես Պարսկաստանի վրա ինչ ճանապարհներով և ովքեր կարող էին հարձակվել. Ալանաց դռնով (Ռազմավիրական լեռնանցք) և Ճորա Պահակով (Դերբենտ) սպառնում էին հոները, իսկ Կասպից ծովի կողմից՝ քուշանները: Դրանց ավելանում էր «հոների սոսկալի առաջնորդը՝ Աթիլան», որը Եվրոպայի համար ունեցավ ճակատագրական նշանակություն[11]:

Ահա քաղաքական այդ անբարենպաստ պայմաններում Վարդան Մամիկոնյանը կազմակերպեց հայ ժողովրդի քաղաքական կյանքը: Վարդանը մանկությունից հմտացել էր ռազմական գործի մեջ, սովորել ձիավարժություն, նետաձգություն, մարտավարություն: Մտավոր կրթիչը Հայաստանի ամենալուսավորյալ այրերից մեկն էր՝ Սահակ Պարթևը: Վարդան Մամիկոնյանը 27-28 տարեկանում Մամիկոնյան գերդաստանի տանուտերն էր: Արդեն Մեսրոպ Մաշտոցի օրերին նա ազդեցիկ նախարար էր և հենց այդ ժամանակ էլ ուղարկվում է հունաց Թեոդոս Բ կայսեր մոտ և իրավունք է ստանում Հայաստանի հունական մասում բացել հայկական դպրոցներ: Մինչև Ավարայրի դեպքերը Վարդանը երեսունից-քառասուն ճակատամարտ էր վարել, աչքի էր ընկել քաջությամբ ու մեծ զորավարի անուն ուներ, շատ սիրված էր իր զինվորներից, հայտնի անուն էր պարսից արքունիքում:

Դ. Դեմիրճյանն առաջ է քաշում Վասակի փեսայի՝ Վարազվաղանի դերը հայ-պարսկական հարաբերություններում՝ ըստ Ղ. Փարպեցու, որովհետև Եղիշեն Վարազվաղանի գործունեության մասին լռում է: Պատմավիպասանը համաձայն է այն փաստին, թե պարսիկներն իրենց պետությունը վարում էին մոգերի օրենքներով. «Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին…»[12]: Վարդան Մամիկոնյանը դիվանագիտորեն զգուշանում

[10] Նույն տեղում, էջ 298:

[11] Աթիլան հասել է մինչև Փարիզ:

[12] Եղիշե, նշվ. աշխ., էջ 12:

էր պարսիկներից և նրանց օգնելու նպատակով պատերազմում էր քուշանների դեմ: Հազկերտ Երկրորդը հաղթում է հույներին ու քուշաններին և որոշում ենթակա ազգերին՝ հայերին, վրացիներին, աղվաններին դավանափոխ անել: Այդ նպատակով հայերին ենթարկում է տնտեսական ու քաղաքական նոր ճնշումների: Այս հատվածում Դեմիրճյանը նույնությամբ կրկնում է Եղիշեի պատմածը, թե ինչպես Հազկերտը ծանրացրեց ռամիկների հարկերը, հարկատու դարձրեց հոգևորականներին, որոնք մինչ այդ ազատ էին հարկերից, մարդահամար անցկացրեց, Վահան Ամատունուն հանեց հազարապետության պաշտոնից և նրա տեղը նշանակեց ոմն պարսկի: Ու երբ հասարակական բոլոր խավերը դժգոհ էին պարսիկներից, եկավ վերջին ու ամենամեծ հարվածը՝ դավանափոխության պահանջը:

Դեմիրճյանը գրաբարից թարգմանաբար բերում է Հազկերտ Երկրորդի հրովարտակի վերջին հատվածը. «Արդ երկու բան կա ձեր առջև. կամ բառ առ բառ պատասխան տվեք նամակիս, և կամ եկեք Դուռը, կանգնեցեք հրապարակական ատյանի առաջ»[13]: Հայերն ըմբոստացան Հազկերտի այս առաջարկի դեմ, ոտքի ելավ հոգևորականությունը, որն Անգղ գյուղաքաղաքում ժողովրդի գլուխն անցած՝ ջարդեց մոգերին և դուրս քշեց եկեղեցուց:

Հայաստանի մարզպանը՝ Վասակ Սյունեցին, օգնության թղթեր է ուղարկում հունաց Թեոդոս Բ կայսերը, Անտիոքի Անատոլ իշխանին:

Վասակն առերես գործում էր՝ ըստ իշխանների ու ժողովրդի ցանկության: Հազկերտը 300 մոգերով զորամաս է ուղարկում Աղվանք, որ Հայաստանը զրկի հարևան քրիստոնյա ժողովուրդների օգնությունից: Վարդանը Աղվանքում ջարդում է պարսիկներին ու եկեղեցիները մաքրում մոգերից: Վարդանը նաև դաշինք է կնքում հոների հետ՝ ընդդեմ պարսիկների: Մինչ Վարդանն ամրացնում էր երկրի հյուսիսային սահմանները, Վասակը սկսում է պառակտիչ գործունեություն ծավալել:

Դեմիրճյանն իրավացիորեն շատ է արժևորում Եղիշեի երկը՝ որպես պատմական կարևոր փաստաթուղթ ու խիստ քննադատում է Ա. Գարագաշյանին. «Եվ Գարագաշյանը՝ շռայլ ձեռքի տակ ունեցած աղբյուրների մեջ՝ հեշտությամբ հրաժարվում է Եղիշեի նման պատմագրից՝ արժեզրկելով նրան: Նա մոռանում է, որ իր ձեռքի տակ ունի մի գործ, որի բնույթը ուսումնասիրելու հատուկ մեթոդ է պետք»[14]: Ահա այդ հատուկ մեթոդով էլ Դեմիրճյանը հասկացել է Եղիշեի երկի պատմականությունն ու նրա գաղափարական ուղղվածությունը: Իր հետազոտության մեջ Դեմիրճյանը կարևորում է նաև Եղիշեի երկի վերջին՝ յոթերորդ գլուխը, որն ամբողջովին վկայաբանական բովանդակություն ունի. «Իսկ Ղևոնդյանց նահատակության նկարագրությունը մենք նկատում ենք իբրև իրողության բանաստեղծական նկարագրություն: Ինչո՞վ է զրկվում իրական հանգամանքից

[13] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., էջ 307: Այս հատվածը բնագրում այսպես է. «Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարեք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկայք, և հանդիման լերուք մեծի հրապարակին»* (**Եղիշե,** *նշվ. աշխ., էջ 54):*

[14] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., էջ 314:*

մի Հազկերտ Երկրորդ[15], որի նկարագիրը տրված է բանաստեղծական ոճով: Գարագաշյանը չի կարողանում պատմական լուրջ փաստեր հանել Եղիշեի բանաստեղծական նկարագրություններից: Արտաքին ձևը նրան խրտնեցնում է: Անկարող լինելով երևույթների արտաքինի տակ գտնել իրականության գոյությունը միաժամանակ՝ նա չի կարողանում գնահատել նրանց տակ թաքնված նշանակությունը, և այնպիսի մի բազմահարուստ աղբյուր՝ ինչպես Եղիշեն է՝ կորցնում է իր արժեքը Գարագաշյանի մոտ…»[16]:

Դեմիրճյանը Եղիշեի մատյանը որակում է որպես կատարված դեպքերի կենդանի նկարագիր, որը, նրա կարծիքով, լիովին ռեալիստական բովանդակություն ունի[17]: Լիովին իրավացի է մեծ գրողը, երբ գրում է. «Մեր ժողովուրդը Եղիշեի պատմության մեջ տեսել է իր կյանքն ու իդեալները և նրա մեջ տեսնում է իր թշնամուն և հերոսին: Թող պարադոքս չթվա՝ եթե ասենք, որ մեր ժողովուրդն էր, որ ստեղծեց Եղիշեին և հետին թվով ճշմարտեց նրա պատմությունը: Եղիշեն տվեց ոչ Վարդանաց պատմությունը, Եղիշեն տվեց համայն հայոց պատմությունը, նրա տիպիկ պատկերը»[18]:

Վարդանանց հերոսամարտն այնքան նույնացել է հայ էթնոսի հոգեբանության հետ, որ Եղիշեի ոգով՝ Վարդանին ու նրա զինակիցներին տարբեր պատմիչներ տվել են ջերմ գնահատականներ: VII դարի պատմիչ Սեբեոսը իր պատմության մեջ հիշատակում է չարագործ Հազկերտի թագավորության ժամանակը, երբ վերջինս կամենում էր աստվածային կարգը Հայաստանում եղծանել, այնժամ Մամիկոնյան տան նահապետը՝ քաջ Վարդանը՝ «Կարմիրն կոչեցեալ», իր հերոս ընկերներով, մահն արհամարհած նահատակվում է հանուն հավատի[19]: Հայ միջնադարի գրեթե բոլոր պատմիչները, որոնք Մովսես Խորենացու հետևությամբ գրել են ամբողջական պատմություններ, հպարտությամբ ու խանդաղատանքով են տալիս Վարդան

---

[15] Երվանդ Տեր-Մինասյանը Հազկերտ Երկրորդի վերաբերյալ ունի այս ուշագրավ ծանոթագրությունը. «Հազկերտ II – (438-457): Նյոլդեքեն այս թագավորի մասին գրում է հետևյալը. «Բահրամի մահից (438 կամ 439) հետո թագավոր է դառնում նրա որդին՝ Հազկերտ II-ը: Սա հալածում էր թե՛ քրիստոնյաներին և թե՛ հրեաներին: Առհասարակ էլ դժվար է նրա մասին լավ բան ասել. նա վերացրեց ամեն ամսի 1-ին կատարվող ընդունելությունները, որոնց ժամանակ ամեն մի ականավոր մարդ անձամբ կարող էր իր գանգատները կամ խնդիրները հայտնել թագավորին: Նրա մասին պատմում են, թե ամուսնացել էր իր աղջկա հետ – սա, իհարկե, հանցանք չէր զրադաշտական կրոնի հետևողի համար, ընդհակառակը, նույնիսկ առաքինություն էր,- բայց հետո սպանել է այդ աղջկան (**Nöldeke Th.,** *Aufsätze persischen Geschichte, էջ 106»): Այս բնութագիրը միանգամայն համապատասխանում է Հազկերտ II-ի կատաղի բնավորությանը, ինչպես այն նկարագրում է Եղիշեն, իբրև սատանայի գործակից, իբրև մի կատաղի գազան, իբրև մի մարդ, որին շատ սիրելի էր խռովությունն ու արյունահեղությունը, իբրև մի չար դև և այլն (տե՛ս* **Եղիշե,** *նշվ. աշխ., էջ 413-414):*

[16] *Նույն տեղում, էջ 315:*

[17] *Նույն տեղում, էջ 319:*

[18] *Նույն տեղում, էջ 322:*

[19] **Սեբեոս,** *Պատմութիւն, աշխատասիրությամբ՝ Գ. Վ. Արգարյանի, Ե., 1979, էջ 64-65:*

Մամիկոնյանի անունը՝ նրան կոչելով սուրբ կամ քաջ Վարդան: Այդպես են նրան հիշում Հովհաննես Դրասխանակերտցին[20], Թովմա Արծրունին[21]:

XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին թվարկում է իրենից առաջ եղած հայտնի հայ պատմիչների անունները և V դարի պատմիչների մեջ սքանչացումով խոսում է Եղիշեի մասին՝ համառոտ բնութագրելով նրա մատյանը. «Եւ յետ նորա սուրբն Եղիշէ, որ պատմէ զքաջութիւն Վարդանայ, թոռին սրբոյն Սահակայ, և զընկերաց նորա, որք յուսովն Քրիստոսի զանձինս ի մահ եդին և պսակեցան ի Քրիստոսէ, և զարիական մահ սրբոց Յովսեփեացն, և զկամաւ տալն զանձինս ի կապանս արքունի նախարարացն հայոց վասն յուսոյն, որ ի Քրիստոս…»[22]:

XIII-XIV դդ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանը «Սյունիքի պատմության» ԺԷ գլուխը նվիրել է Ավարայրի ճակատամարտի հակառակորդ Վասակ Սյունեցուն՝ այն խորագրելով «Սյունյաց անարի ու վատ իշխան Վասակի գործը, նրա կորստյան պատճառը»: Վասակի մահվան հանգամանքները առավել մանրամասն իմանալու համար հղում է Եղիշեի ու Ղազար Փարպեցու մատյանները. «Նույն արքունիքում բանտում մնաց, մինչև որ այնտեղ էլ մեռավ, որի հանգամանքների մասին քեզ լրիվ պատմում են Եղիշեն ու Ղազար Փարպեցին»[23]: Ստ.Օրբելյանը ևս մեծ սիրով խոսում է Վարդան Մամիկոնյանի մասին՝ նրան անվանելով «սուրբ Վարդան»[24]: Դեմիրճյանը թվարկում է նոր գրականության մի խումբ գրողների անուններ, որոնք եղել են Եղիշեի պաշտողներն ու նրան փառաբանողները. «Իզուր չպաշտեց Եղիշեին մեր ժողովուրդը, և իզուր չերգեցին նրան Ալիշան, Պատկանյան, Նալբանդյան, Շահազիզ, Հովհաննիսյան, Ջիվանի և շատերը»[25]:

Ղևոնդ Ալիշանը «Պլպուլն Ավարայրի» հրաշալի պոեմում ներբողում է և՛ Վարդանին, և՛ Եղիշեին և համոզված է, թե հայ ժողովուրդը երբեք չի մոռանալու Վարդանին. «Հայաստան հիշե զյուր Կարմիր Վարդան»[26]:

Իսկ Ռափայել Պատկանյանը «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» վիպասանության «Վարդանի երգը» հատվածի վերջին տունն ավարտում է հանուն ազգի ազատության ինքնակամ նահատակվելու պատգամով.

Թող լրռե մունջը, անդամալույծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,

---

[20] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 58,63,66:*

[21] **Թովմա Արծրունի և Անանուն,** *Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 67, 83, 92, 93, 95, 98, 99, 100, 101:*

[22] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 6-7:*

[23] **Ստեփանոս Օրբելյան,** *Սյունիքի պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 103:*

[24] *Նույն տեղում, էջ 106:*

[25] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., հ. XII, էջ 322:*

[26] **Ալիշան Ղ.,** *Նվագներ, Ե., 1957, էջ 43:*

Է՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք –
Ու այնպես լըռենք[27]*:*

451 թ. ընդվզման մեջ Դեմիրճյանը շեշտում է մի քանի կարևոր խնդիրներ. հայերը պաշտպանեցին իրենց ընտանիքը[28] *մոգերից, ազգային լեզուն, քրիստոնեական կրոնը, ազգային առանձնահատկությունները: Նրա կարծիքով, Վասակն էլ դեմ էր դրանց. «Համաձա՞յն էր սրան Վասակը՝ ո՛չ: Կամ ասենք՝ չգիտենք: Կամ՝ եթե մինչև անգամ հակառակ էլ լիներ՝ պատմությունը գնում էր նրա դեմ»*[29]*:*

Հետազոտության մեջ Դեմիրճյանը բազմիցս շեշտում է, թե կրոնական թվացող պատերազմը իրականում քաղաքական էր, և նրանում վճռվում էին պետական խնդիրներ, որոնց իրականացման ամենահարմար միջոցն, ըստ պարսից արքունիքի, դավանափոխությունն էր: Դեմիրճյանն իրավացիորեն նշում է հայ առաքելական եկեղեցու հակաքաղկեդոնական բնույթը, որի նպատակը ևս զուտ կրոնական չէր, այլ՝ ազգային ինքնուրույնությունը պաշտպանելու եզակի միջոց: Նա 451 թ. Վարդանանց պատերազմն անվանում է հայրենական. «Առանց հայ ժողովրդի ըմբոստացման ոչ հայ հոգևորականությունը և ոչ էլ իշխանական դասը կարող էին հայրենական պատերազմ սկսել պարսից դեմ»[30]*:*

Միջազգային հայագիտության մեջ Վարդանանց պատերազմն առաջին հերթին որակվում է որպես քաղաքական պայքար և ապա կրոնական: Դա ազգային-ազատագրական պատերազմ էր: Բելգիացի հայագետ Ֆելիքս Նևի "L'Arménie chrétienne et sa literature" («Քրիստոնյա Հայաստանը և նրա գրականությունը») մենագրության մեջ առանձին գլուխ նվիրված է Եղիշեին ու նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ("Histoire de la guerre des Arméniens contre les Perses sous Vartan") երկին[31]*: Ֆ. Նևը Վարդանանց պատերազմի մասին գրում է. «Հայ ազգի քաղաքական և կրոնական անկախությունը պահանջում էր արյան զոհաբերություն»*[32]*: Ինչպես տեսնում ենք, բելգիացի հայագետը Վարդանանց պատերազմի առաջին դրդապատճառը համարում է Հայաստանի քաղաքական շահերը:*

Դեմիրճյանը շատ է կարևորում մինչև 451-ի Ավարայրի ճակատամարտը տեղի ունեցած այն նախորդող մարտերը, որոնք Վարդան Մամիկոնյանը վարել է պարսիկների դեմ Աղվանքում ու տարել հաղթանակ: Այդ մարտերն, ըստ գրողի, նախ, ներկայացնում են Վարդան Մամիկոնյանին՝ որպես

---

[27] **Պատկանյան Ռ.,** *Երկեր, Ե., 1980, էջ 71-72:*

[28] *Ըստ զրադաշտական կրոնի սրբազան մատյանի՝ Ավեստայի, խրախուսվում էր ոչ միայն բազմամուսնությունը, այլև մերձամուսնությունը:*

[29] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., էջ 327:*

[30] *Նույն տեղում, էջ 331:*

[31] *Տե՛ս* **Nève F.** *L'Arménie chrétienne et sa littérature, Louvain, 1886, p. 299-316.*

[32] *"L'indépendance politique et religieuse de la nation arménienne exigeait le sacrifice du sang" (նույն տեղում, էջ 301).*

տաղանդավոր զորահրամանատարի, նաև ապացուցում են, թե այդ ժամանակ հայերը տիրապետում էին ռազմագիտությանը: Մարտական դեպքերը, որոնք նախորդեցին Ավարայրին, թվարկվում են հետևյալ հերթականությամբ: Առաջինը Անգղ գյուղաքաղաքի բախումներն էին, որոնք ժողովրդի տարերային ցասումի դրսևորում էին, իսկ Վարդանն առաջին մարտական ընդհարումն ունեցել է Զարեհավանում: Երկրորդը Ատրպատականի մարզպան Սեբուխտի հետ ընդհարումն էր, որը, կայծակնային հարձակման հետևանքով, Վարդանին ու նրա զորքին բերեց հաղթանակ:

Դեմիրճյանի համոզմամբ, Վարդան Մամիկոնյանի ամենամեծ ձեռնարկումը Ավարայրի ճակատամարտն էր, «ուր նա փայլում է իբրև հիանալի զորավար և ստրատեգ»[33]: Վիպասանը, վերլուծելով Ավարայրի հերոսամարտը, ի տարբերություն Եղիշեի[34], հայերի հաղթանակը չի համարում բարոյական, այլ՝ ռազմական ու փաստերով հիմնավորում է իր եզրահանգումը:

Վարդանը գործել է շատ արագ ու գործնականորեն պարզելով, որ դրսից օգնություն չի լինելու, հենվում է աշխարհազորի վրա, և 66 հազարանոց բանակը շարժում է դեպի Հայաստանի սահմանները: Դեմիրճյանը շեշտում է. «Վարդանը գնում էր ոչ հասարակ մի ընդհարման, նա գնում էր վճռական մարտի բռնվելու իր ժամանակի ամենահզոր պետության բանակի հետ»[35]: Կամավորական խմբերը ոչ միայն չեն ընկճում Վարդանին, ընդհակառակը, նա իրեն զգում է որպես ժողովրդական զորավար, որը Հազկերտի դեմ էր տանում հայ ժողովրդին՝ երկրի արմատը[36]: Վարդանը հայ զորքին տանում էր հաղթելու: Գրողը, հենվելով Եղիշեի հաղորդած փաստի վրա, ներկայացնում է կռվող կողմերի զոհերի քանակը: Հայերից սպանվում է 1036 մարդ, իսկ պարսիկներից՝ 3544 հոգի: Եթե հայերից ընկան այնպիսի նշանավոր նախարարներ, ինչպիսիք էին Վարդան Մամիկոնյանը, Խորեն Խոռխոռունին, Արտակ Պալունին, Հմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայեցին, Գարեգին Սրվանձտյանը և այլ ավագներ, ապա պարսիկներից զոհվեցին 9 նշանավոր զորավարներ:

Դեմիրճյանն իրավացիորեն նկատում է, թե մարտը չվերջացավ Ավարայրում. դրան հաջորդեցին պարտիզանական կռիվներ լեռնադաշտերում ու մոտակա ձորերում. «Հազկերտը պարտվեց թե քաղաքականապես և թե ռազմականապես»[37]: Արցախի անտառներում ամրացած հայերն ամենամեծ հարվածները հասցրին պարսիկներին:

Պատմավիպասանը թվարկում է այն զիջումները, որոնք Հազկերտն արեց Ավարայրից հետո: Հայ հոգևորականներին դատելուց ու պատժելուց հետո նրանց մի մասին արձակեց տուն վերադառնալու: Հայ հոգևորականների մի մասը նահատակվեց՝ դատի ժամանակ իրեն շատ ըմբոստ պահելու

---

[33] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., էջ 336:*

[34] *Եղիշեն գրում է. «Քանզի որ եթէ կողմ էր, որ յաղթեաց, և կողմ էր, որ պարտեցաւ, այլ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան» (***Եղիշե,** *նշվ. աշխ., էջ 240):*

[35] **Դեմիրճյան Դ.,** *նշվ. աշխ., էջ 338:*

[36] *Նույն տեղում, էջ 340:*

[37] *Նույն տեղում, էջ 348:*

հետևանքով: «Պարտվեցին Վասակն ու նրա հետ բոլոր կուսակիցներն անհետացան: Մնացին Վարդանանք»[38]: Դեմիրճյանը շատ է կարևորում այն փաստը, թե Վարդանի ջանքերով հայ ժողովուրդը ձեռք բերեց ճիշտ դիրքորոշում՝ կատարյալ ազգային գիտակցություն, որը զարթնել էր պարսկական ճնշումների հետևանքով քրիստոնեություն ընդունելով, գրերի գյուտով, հայկական դպրոցներով ու ազգային մատենագրությամբ: Նա համոզված է նաև, թե Վարդանի դիրքորոշումը էական դեր կատարեց հարևան ժողովուրդների՝ վրացիների ու աղվանների քաղաքական-մշակութային կյանքում: Վարդանանք քրիստոնեությունը պաշտպանեցին ոչ միայն Հայաստանում, այլև Անդրկովկասում և Առաջավոր Ասիայում:

Լիովին ուսումնասիրելով Վարդանանց պատերազմը՝ մեծ գրողը այն գեղարվեստորեն անմահացրեց իր գլուխգործոցում՝ «Վարդանանքում», որը ցարդ մնում է հայ պատմավիպասանության պսակը:

Դեռևս մինչև «Վարդանանքը» Եղիշե Չարենցը շատ բարձր գնահատական է տվել Դ. Դեմիրճյանի երկերի լեզվին. «Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունների լեզուն բնորոշ է նրանով, որ նրա հիմքում լինելով գրական մաքուր լեզու (և իր այս կողմով հարելով լեզվական ընդհանուր «տերյանական» տիպին), կրում է իր մեջ մեր լեզվի, իբրև ազգային ձևի, հատկանշական էլեմենտների օգտագործման շատ հարուստ փորձ - և հենց այս է Դեր. Դեմիրճյանի լեզվի ամենամեծ արժեքը մեր գրականության մեջ»[39]:

Ե. Չարենցի օրերին արդեն Դեմիրճյանի գործերում առկա էր Եղիշեի մատյանի ոսկեդինիկ լեզվի ազդեցությունը, որն առավել շքեղորեն դրսևորվեց «Վարդանանքում»:

К 135-летию со дня рождения
Дереника Демирчяна

ВОЙНА ВАРДАНАНЦ ПО Д. ДЕМИРЧЯНУ

ДОЛУХАНЯН А. Г.

Резюме

В 1943 г. в журнале “Советакан граканутюн” (“Советская литература”) была опубликована статья Д. Демирчяна “Война Вардананц”, в которой, основываясь на данных историков V в. Егише и Лазаря Парпеци, он попытался в новом свете представить историко-психологический аспект войны Вардананц.

Д. Демирчян усматривал в этой войне божественный замысел. Победу в войне писатель характеризует не как моральную победу армянского народа, а

---

[38] *Նույն տեղում, էջ 349:*

[39] **Չարենց Ե.,** *Գրականության մասին, Ե., 1957, էջ 197:*

как военно-политическую победу, которой завершилась национально-освободительная борьба армянского народа.

On Derenik Demirchian's
135th birth anniversary

VARDANANTS WAR ACCORDING TO DEMIRCHIAN

A. DOLUKHANYAN

Abstract

D. Demirchian saw a divine intervention in Vardanants war. The insurrection of Armenians on the Avarayr field serves as an eternal reminder for the nation never to submit to foreign yoke and always to preserve their national independence.

In 1943, Demirchian submitted a paper on Vardanants *War* to the monthly review "*Sovetakan Grakanutiun*" ("*Soviet Literature*"), in which he attempted to cast a new light on the historical-psychological aspects of the mentioned war. Unlike Yeghishe and L.Parpetsi, Demirchian did not regard the victory gained by the Armenians nation as moral, but considered it to be a *military one* that concluded Armenian national liberation movement.